# Արձանագրություն հ. 9

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 16.12.20թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 37 անդամներից 27-ը:
Նիստը նախագահում էր պրոֆեսոր Ս.Ղանթարջյանը:

Օրակարգում՝

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը ( զեկուցող՝ դեկան Հ.Սարգսյան):

Բացելով նիստը նախագահողը ձայնը տվեց ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ.Սարգսյանին, որը ներկայացրեց մեկ տարում ֆակուլտետի գործունեության արդյունքները /զեկուցումը կցվում է թղթապանակային ձևով/:

Նա հիմնական ուշադրությունը դարձրեց կրթական գործընթացում տեղի ունեցած փոփոխությունների վրա. վերանայվել են ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական որոշ ծրագրերի ուսումնական պլանները և առանձին դասընթացների առարկայական ծրագրերը, ընդ որում դա շարունակական է լինելու: Առաջին անգամ պրակտիկայի ընտրությունը կատարվել է նախապես՝ օնլայն, ինչի արդյունքում հնարավոր է եղել խուսափել կրկնակի գրանցումից և հերթերից:

Նա անդրադարձ կատարեց հաշվետու տարում ամբիոնների գործունեությանը, ֆակուլտետի միջազգային կապերին, նշելով դրական կողմերը և բացթողումները, ինչպես նաև Սահմանադրական տնտեսագիտության գիտա-վերլուծական կենտրոնի ձեռքբերումներին,

Արտահայտվեցին.

Պրոֆեսորներ Ա.Մարկոսյանը, Հ.Մնացականյանը, կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ դոցենտ Կ. Խաչատրյանը: Նրանք բոլորն էլ գոհունակություն հայտնեցին դեկանի մեկ տարվա կատարած աշխատանքի վերաբերյալ և այն գնահատեցին բավարար:

Բաց քվեարկությամբ որոշեցին տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ.Սարգսյանի մեկ տարվա կատարած աշխատանքը համարել բավարար:

Նիստի նախագահ.
տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ղանթարջյան

Գիտխորհրդի քարտուղար
տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Համբարձումյան